**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

0078 Երևան, Հալաբյան 41 ա, հեռ. 380250

09.10.2014 N 10/7534-14
Ձեր N ________________

**«ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ» Հ/Կ-ի ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ ԱՐԹՈՒՐ ՍԱՔՈՒՆՑԻՆ**

**Հարգելի պարոն Սաքունց,**

Ի պատասխան ՀՀ արտաքին գործերի նախարարության 2014 թվականի սեպտեմբերի 9-ի 1112/57756-14 գրության հայտնում եմ, որ Ձեր կողմից հայցվող «Անհայտ կորած անձանց մասին» ՀՀ օրենքի նախագիծը ներկայումս գտնվում է ՀՀ արդարադատության նախարարությունում և ուսումնասիրվում է: Հարկ եմ համարում նշել, որ ներկա փուլում ՀՀ արդարադատության նախարարությունը տիրապետում է նախագծի աշխատանքային տարբերակին:

Միաժամանակ հայտնում եմ, որ համապատասխան ուսումնասիրության աշխատանքներն ավարտելու և նախագիծը շրջանառության դրվելու դեպքում միայն հնարավոր կլինի կազմակերպել հանրային քննարկումներ և տրամադրել հիշյալ օրենքի նախագիծը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԱՐՄԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Կատարող՝ Էլինա Մադոյան
ՀՀ ԱՆ աշխատակազմի օրենսդրության վերլուծության և կատարելագործման վարչություն,
Հեռ. 380-227